ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2011 թվ. հուլիսի 8-ի նիստի /արձանագրություն թիվ 16/
«ՀՊՄՀ-ի միջազգայնացմանն ուղղված գործընթացների մասին»

Լսելով և քննարկելով ՀՊՄՀ կրթության զարգացման և որակի ապահովման վարչության «ՀՊՄՀ-ի միջազգայնացմանն ուղղված գործընթացների մասին» հաղորդումը, ՀՊՄՀ գիտական խորհուրդը որոշում է `

1. Արձանագրել միջազգայնացման գործընթացի կարևորությունը ՀՊՄՀ կրթական բարեփոխումների շրջանակներում և համապատասխանությունը համալսարանի ռազմավարական ծրագրի գերակայություններին,
2. Համալսարանի բոլոր ստորաբաժանումներում քննարկել միջազգային համագործակցության կազմակերպման, առկա հարաբերությունների արդյունավետության բարձրացման խնդիրները և նախանշել կրթական զարգացումների պահանջներին համահունչ կոնկրետ միջոցառումներ / նոյեմբեր 2011, ՀՊՄՀ ամբիոններ,ֆակուլտետներ/,
3. ՀՊՄՀ միջազգայնացմանը վերաբերող առաջարկությունները ներկայացնել համալսարանի ռազմավարական հանձնաժողովին,
4. Ստեղծել, հետագայում պարբերաբար թարմացնել ու ընդլայնել համալսարանի կրթական, գիտական գործունեությունը լուսաբանող տեղեկատվական նյութերի տեսականին արտերկրի գործընկերներին տրամադրելու նպատակով /փետրվար-մարտ 2012, լրատվության և հանրության հետ կապերի վարչություն/,
5. Համալսարանի պրոֆեսորադասխոսական անձնակազմի մասնագիտական իմացության խորացման, դասընթացների արդիականացման ու նորացման նպատակով ՊԴԱ-ի համար կազմակերպել օտար լեզուների ուսուցման երկարաժամկետ ու կարճաժամկետ դասընթացներ/ հունվար 2012, օտար լեզուների ֆակուլտետ/,
6. Համալսարանի գործունեությունը ԵԲԿՏ-ի կառուցվածքին համապատասխանեցնելու և համալսարանի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հանձնարարել ՀՊՄՀ շահագրգիռ վարչությանը մշակել համալսարանի միջազգայնացման գերակա ուղղությունների առաջնահերթ միջոցառումների ծրագիր և ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանը/ մարտ-մայիս 2012, ՈՒՄ վարչություն/,
7. Հանձնարարել համալսարանի ֆակուլտետներին և ամբիոններին ծավալել աշխատանքներ արտասահմանյան առաջավոր բուհերի և միջազգային կազմակերպությունների հետ կապեր հաստատելու և զարգացնելու գործում, միտված մասնագիտական, միջառարկայական կրթության միջազգայնացմանը,

կրթական և հետազոտական բաղադիչների արդիականացմանը/ 2011-2012 ուս տարի, ամբիոններ, ֆակուլտետներ/:

8. Հանձնարարել համալսարանի ուսումնամեթոդական վարչությանը իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ արդի միջազգային ծրագրային չափանիշներին համահունչ: Վերանայել համալսարանում գործող կրեդիտավարկանշային համակարգը և գնահատման համակարգը դրանք համապատասխանեցնելով ԵԲԿՏ-ի գործող պահանջներին / փետրվար- մայիս 2012, ՈՒՄ վարչություն /:
9. Հանձնարարել համալսարանի միջազգային կապերի և ստանդարտիզացման վարչությանը տանելու անհրաժեշտ միջոցառումներ ՀՊՄՀ ուսանողների և դասախոսների շարժունությանը եվրոպական բարձրագույն կրթության տարածքում նպաստելու համար, մասնավորապես ակտիվացնել աշխատանքները Էրազմուս Մունդուս, Պեստալոցիի եվրոպական ծրագրերի շրջանակներում /2011-2012 ուստարի, միջազգային կապերի բաժին/,
10. Հանձնարարել համալսարանի գիտական կենտրոնին ապահովել ՀՊՄՀ ինտեգրումը եվրոպական հետազոտական տարածքին, այդ նպատակով պարբերաբար կազմակերպել միջազգային գիտաժողովներ, խրախուսել արտասահմանյան հանդեսներում դասախոսների հոդվածների հրատարակումը, արտասահմանյան գործընկերների հետ համատեղ գիտահետազոտական և փորձագիտական աշխատանքները / 2011-2012 ուստարի ՀՊՄՀ գիտ. կենտրոն /,
11. Հանձնարարել ամբիոնների ստեղծել օտար լեզուներով իրականացվող առաջանցիկ կրթական ծրագրեր մայիս 2012, ՀՊՄՀ ամբիոններ/,
12. Ընդլայնել և բազմազանեցնել ՀՊՄՀ միջազգային կապերը, խթանել կրթական և գիտական ոլորտներում համագործակցությունը եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ, արտասահմանյան առաջատար բուհերի հետ ներգրավվել ռազմավարական միություններում և ցանցերում՝ կնքելով երկարաժամկետ/կարճաժամկետ համագործակցության պայմանագրեր/ 2011-2012 ուստարի ՀՊՄՀ ստորաբաժանումներ/:
13. Ակտիվացնել միջազգային համագործակցությունը՝ ՀՊՄՀ-ի շնորհվող որակավորումների միջազգային ճանաչման նպատակով, կենտրոնացնելով համագործակցությունը միջազգային համալսարանական համատեղ ծրագրերի ստեղծման և երկդիպլոմների տրամադրման ուղղությամբ/ 2011-2012 ուս տարի ՈՒՄ և ԿՁ և ՈԱ վարչություններ/: